ղրամատ Արք եպիսկոպոսութեան ըստ որում յիշեալ քաղաքաց հայոց ժողովուրդն սեհպական ժողովուրդեան Աթոռոյս գանձասարայ սրբոյն գրիգորիսի։

Ամենահպատակ ծառայ և աղօթարար խոնարհ Արք եպիսկոպոս հայոց ղարաբաղու

Պաղտասար Հասանջալալեան։

1833 յամի Տեառն ի Աթոռն գանձասար
Նուբրի 23

Գ. ԵՊ. ՍՐՈՒԱՆՁՏ. ՆԱՄԱԿԸ Հ. ԱԼԻԶԱՆԻՆ

Պատուական Ս. Հայր.

Մայիսին գրեցի Ձեր Հայրութեան թէ կ'երթամ յԱյրարատ և նահապետիդ ողջոյն տամ Մասիսին։

Այժմ վերադարձած եմ. և փոխադարձը Ձեզ կը բերեմ։ Ողջոյն Քեզ. Միածնի իջման Ս. տեղէն. ողջոյն Երկնահանգոյն Ս. տաճարին կամարներէն։ Ողջոյն Գայիանէի և և Հռիփսիմէի Ս. շիրիմներէն. Ս. Մեսրոբայ գերեզմանէն։ Ողջոյն մեր լուսատուի Խոր Վիրապէն. Գեղարդայ հիանալի խորաններէն։ Ողջոյն Այրարատի հողէն ու ջրէն. Հրազդանէն ու Երասխէն։ Ողջոյն Աստուածամուխ Ս. Գեղարդէն. ողջոյն Թադէոսի և Լուսաւորչի ս. Աջերէն, և այլ բազում սրբութեանց և սրբոց օրհնեալ մասերէն։ ողջոյն Մանուկ և Ալևոր Մասիսներէն։ Ալևորն կընմանէր Քոյդ պատկերին. գագաթը ճերմակ. երեսը ճերմակ. ալիք ճերմակ և փառաւոր. աչկունքը սուր. խոր, և խոշոր։ Բերանը փակ՝ բայց մշտախօս և բարձրաձայն։ Սրտի տեղը՝ կրակով լի, որ կը վառի անմարելի, և կը շարժէ ամպն ու անդունդ. Հայոց սրտեր հանէ 'ի թունդ. ինչպէս Քո սիրտ իւր կրակով, իւր նուագով պայծառ հոգւով, ծածկեալ սիրոյդ։ ...

Մնամ ս. աղօթիցդ կարօտ

Սրուանձտեան Գարեգին եպիսկոպոս

1886 յուլիս 19
Տրապիզոն.